Գործարանային կօմիտէների և բանւորական խորհրդի միացեալ այլ նիստերից մէկում շեշտում է խորհրդի անդնդունակութիւնը և առաջարկում է տապալւած համարել հին կաղմակերպութիւնը և առժամանակ մինչև նոր խորհրդի կազմակերպումը նախկին բանւորական խորհրդի բոլոր վարչական-քաղաքական ֆունկցիաները լանձնել կօնֆերանսին։

Դա լինում է մեծամասնականների առաջին լաղթանակը։ Այդ առաջին լաղթանակին հետեւում է երկրորդը։

Կառարւում են նոր ընտրութիւններ, որոնք պարզում են որ Բագւի պրոլետարիատի մեծամասնութիւնը պաշտպանում է հոկտեմբերեան լեզափոխութեան լոգունդները։

Նոր խորհրդի մէջ ևս ընտրում են մենշևիկներ, էսէրներ, դաշնակցականներ և մուսաֆաթականներ։ Աական դրանք բոլորը միասին լինում են միշտ տննշան և թուլ, որովհետեւ գործում են միշտ մեկուսացած և առանձնացած։

IV.

Այլ դրութիւն էր տիրում Անդրկովկասի մնացեալ վայրերում։

Փետրւարեան լեզափոխութիւնից յետոյ Անդրկովկասի վարչական զիսաւոր կենտրոնը—Տիխիսը դառնում է նացիօնական բոլոր հոսանքների կենտրոնավայրը։

Կովկասեան ժողովուրդներին թւում էր, որ նոր լեզափոխութեան հրաժարակ և ամենառաջնակարգ խնդիրներից մէկը պիտի լինի Կովկասեան աղդութիւնների ավտօնութիւն։ Աական ալդպէս մտածելով Կովկասեան նացիօնալիտները չէին համարձակում բացարոշ կերպով երևան հանել իրենց իսկա-

կան ու եպարատիստական տէնչերը։ Յեղափոխութեան առաջին օրերին Կովկասեան նացիօնալիտները՝ մուսաֆաթականները, դաշնակցականները և մենշևիկները նոյնիոկ աշխատում էին ամեն կերպ համոզել, որ իրենք ընդհանուր «դէմոկրատական» Ռուսաստանի պաշտպաններն են, որ նրանք բոլորը կամենում են միմիայն տեղական պայմանների համեմատ ավտոնոմ զեմափօններ ստեղծել։

Վրացական մենշևիզմը մօտաւորապէս փետրւարի վերջն, մարտի կէսին նորից ասպարէզի վրայ էր գրել Կովկասեան զեմստվօի խնդիրը։ Վրացական մենշևիզմի տաղանդաւոր թէօրետիկը ն. Ժօրդանեան մէջ տեղ բերելով իր հին ծրագրը առաջարկում էր կազմակերպել երեք զիսաւոր զեմստվօններ։ Այդ զեմստվօններից իւրաքանչիւրը պիտի ունենար իր տերրիտորիալի սահմաններում կօմպակտ ազգային ամրողութիւն։

Ժօրդանիալի առաջարկի համաձայն Անդրկովկասում պիտի կազմակերպւէին վրացական, հայկական և թիւրքական զեմստվօններ։ Եւ ապա այլ բոլոր զեմստվօնները պիտի համախմբւէին մի ընդհանուր համակովկասեան զեմստվօի շուրջը։

Վրացական սոցիալ-դէմոկրատիալի սահմանադրական կամուգուած էր, որ իր նախագծի կիրառումը կարող է վերջ տալ աղդանական կոիւներին, կարող է ստեղծել Կովկասեան մողովուրդների համերաշխ մի միութիւն։

Հայ նացիօնալիստների համար ժօրդանիալի ծրագիրը լաւագոյն մի առիթ էր։ Անենից առաջ ողջունում են մենշևիկներին դաշնակցականները, որոնք իսկոյն և եթ առաջարկում են նկարել նախ և առաջ նոր Կովկասի վարչական քարտէզն և ապա միայն կազմակերպել երեք կանտոններ։ Այդ քարտէզը պատրաստում են հէնց իրենք դաշնակցականները։ Քարտէզի վրայ սահմանագծուում է ապագայ հայկական, վրացական և թիւրքական զեմստվօնների տերրիտորիան։

Եւ ահա հէնց այլ քարտէզի առթիւ սկսւում է առա-

շին, ամենառութեղ և խոշոր պալքարը հայ և թուքը նացիօնայի խստների միջև:

Մարքսիստների համար ակներև էր, որ զեմստվոների խնդիրը Կովկասեան նացիօնալիստներից խւրաքանչիւրի համար ռազմական մի նոր զէնք է:

Վրացական նացիօնալիստները համոզւած էին, որ առանձնացած և ազգային «զեմստվոի» օգնութեամբ նրանք կարող են արագաբար համախմբել վրացական հասարակութեան տարրեր տարրեր...

Միւնոյն էին ցանկանում անել և հայ նացիօնալիստները:

Իսկ թուքը նացիօնալիստները պատրաստ էին պաշտպանել միւնոյն առաջարկն այն պարմանով, եթէ նրանց զեմստվոի սահմաններն ընդգրւէին աւելի լայն...

Մարքսիստների համար պարզ էր, որ Կովկասեան նացիօնալիստները ավտոնոմ ազգային զեմստվոներից լետով պիտի առաջազրեն սկզբում ափոնոմ, իսկ լետագայում «անկախ» պարագին հանրապետութիւնների առաջարկը:

Եւ այդպէս էլ լինում է:

Միւնոյն ֆօրդանեան՝ վրացական մենշևիզմի այդ ամենախելօք իդէօլոգը դառնում է («ազգային») հանրապետութիւնների իդէօլոգը — իսկ նրանից լետոյ Կովկասեան բոլոր նացիօնալիստները շտապում են կիրառել ֆօրդանիալի բոլոր առաջարկները...

Եւ այդ բոլորը շատ օրոշ կատարւում է Անդրկովկասի ժարագարագում, ուր խմբւած են լինում Կովկասեան երեք գլխաւոր նացիօնալիստական կուսակցութիւնների ղեկավար մարմինները.

Միմիայն Բագուն՝ արդիւնաբերական և պրոլետարական Բազուն է առանձնանում Տփիխիսից:

Բազւում պրոլետարական շարժման ազգեցութեան ներքու նոյնիսկ նացիօնալիստական կուսակցութիւնները չեն համարձակւում պաշտպանել իրենց Տփիխիսի ղեկավարներին:

Տփիխիսում մենշևիկները պաշտպանում էին գերմտն իմպերիալիստներին, իսկ Բագուի մենշևիկները պնդում էին, որ նրանք զէմ են թէ ազգային հանրապետութիւնների և թէ օտարերկրեալ իմպերիալիստների:

Տփիխիսի դաշնակցականները, մուսաֆաթականների և մենշևիկների հետ միացած ամրապնդում էին «ազգային հանրապետութիւնների» վունդամէնտը, իսկ Բագուում միւնոյն դաշնակցականները լաբարարում էին, որ իրենք խորհրդացին իշխանութեան կողմնակիցներ են...

Այդպէս էին նաև մուսաֆաթականները:

Սակայն իրապէս իւրաքանչիւրը այդ հոսանքներից պարասա էր քանդել Խորհրդացին Խշխանութիւնը:

Եւ այդպէս էլ վարւում են ամենից առաջ մուսաֆաթականները:

Բագուի քաղաքացիական պատերազմը սկսում են ոչ թէ մեծամասնականները, այլ մուսաֆաթականները:

Բագուալ մեծամասնականների կազմակերպութիւնը գործադրում էր բոլոր շանքերը լետաձգելու քաղաքացիական պատերազմը: Եւ նա այդ անում էր նկատի առնելով տեղական ուրոյն պայմանները:

Ա. Զապարիձէն մէկն էր նրանցից, որոնք միշտ շեշտաւմ էին, որ Բագուի միշամարում քաղաքացիական պատերազմի լայտարարութիւնը կարող է սաեղծել ազգային ամենասուր ընդհարութներ և բազմաթիւ հէնց Բագուում: Վարելով հետեղական կոմմունիստական պլրազադանդ Զապարիձէն «չափաւոր» էր այն չափով, որչափ նա կամենում էր խափանել ազգային սուր ընդհարութներն և արիւնհեղութիւնները: Եւ Բագուի մեծամասնականների կազմակերպութիւնը չնայած նրան, որ լանախ քննադատում էր Զապարիձէի զգուշ քաղաքականութիւնը՝ կեանքում և իրական գործունէութեան մէջ գնում էր միւնոյն «չափաւոր» ուղիով...

Սակայն Բագուում ևս հակառակ բոլոր այն շանքերին, որ

դորժագրւում են մեծամասնականների կողմից բռնկւում է քաղաքացիական պատերազմը:

Այդ պատերազմը սկսում են այստեղ մուսաֆաթականները՝ թիւրք կասլիտալիստների և պամիշչչիների իդկօլոգները: Դրանք պատրաստում են որոշ զօրագունդ քաղաքում և շրջակայ գիւղերում և ապա յարձակւում են Բագւալ խորհրդի կարմիր զօրաքանակի վրա...

Բագւալ խորհրդի պաշտօնական օրդանը հետևեալ կերպ է բնորոշել քաղաքացիական պատերազմի ընողթը՝ «Բագւան ևս բաժանեց ոռւսական այլ քաղաքների վիճակը, երեք օր շարունակ նա դարձաւ ասպարէզ քաղաքացիական կուի, երեք օր շարունակ մեր քաղաքում որոտում էին թնդանօթները, հարճատում հրացանները և մարդկային թանկագին արիւնը հոռում էր փողոցներով: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մօտ նախայարձակ կողմը ռէակցիան էր, այս անգամ զիխաւորւած Մուսաֆաթի բէգական կուսակցութեամբ: Բագւալի խորհուրդը ամեն հնարաւոր զիջումն արաւ ալդ կուսակցութեան՝ չկամենալով ենթարկել Բագւան քաղաքացիական կուի արհաւելիքներին, որովհետեւ այդ կուիւր մեզ մօտ, ադգայնական յարաբերութիւնների շիկացած մթնոլորտում, հեշտութեամբ կարող էր փոխել ադգային բնդիարումների, որ յետ կը մզէր կովկասի խոզակ զարգացումը տասնեակ տարիներով»*):

* Տես «Քաղաքացիական կուրը Բագւան» յօդամը (զետ, «Բանւոր, Զինւոր և Նաւաստի պատգամաւորների Խորհրդի Տեղեկատուել» № 3-ի մէջ 1918 թ. հինգշաբթի 18 ապրիլի): Միւնոյն յօդամում ընդհանուր կերպով շեշտում են նաև Խորհրդային Խիսանութեան մօրտակայ նպատակները՝ «Մենք չպէտք է մոռանանք, որ ուշակցիան մեզ մօտ, Կովկասում, յենում է աշխատաւոր մասսաների տպիտութեան վայր, օպտագործում է այն յանում իր գասակարգային շահերի և յաջողում է իր նեղ, դասային շահերի համար մզւող կուին յաձախ տալ աղջային, դաւանական ընույթ և այսպիսով դնել ժողովթական մասսաները ընտանչումի ճանապարհի վայր: Բագւի խորհուրդը պէտք է աշխատել Խլել ու եակցիայից այն կատարում է իր պէտքի գործը և գասակարգային պատական պատահումը:

Բագւալ խորհրդի համար մնում էր միայն մի ելք: Կամ նա պիտի անձնատուր լինէր: Այդ պարագայում պիտի անհրաժշտաբար չախշախւելք յեղափոխութիւնը Սնդրկովկասում: Իսկ Ռուսաստանը պիտի զրկւէր այն Բագւալից, որը իր նաւթագրիւրներով կարող էր օժանդակել ամբողջ արդիւնաբերութեանը: Երկրող ելքը — պայքարն էր: Սակայն ակներև էր, որ այդ պայքարը լաշողութեամբ կարող է պատկւել միմիայն հայ գորամասերի աշակցութեամբ: Ուրիշ ելք չկար: Բագւալ թուրք զօրախմբերը մանում էին վայրի գիվիղիսպի: մէջ և պաշտպանում էին բէգական օրինացիայ, իսկ ոռւսական գորամասերը չափաղանց նւազ էին և աննշան:

Ա. Զապարիձէն մէկն էր նրանցից, որոնք գիտակցում էին գրութեան նրբութիւնը: Եւ նա, որպէս հետեղական մեծամասնական բոլոր հանդամանքները կշռադատելուց յետով գալիս է այն համոզման, որ քաղաքացիական կուի պրոցէսում անհրաժեշտ է օդապործել թէ ծովային նաւաստիների և թէ հայ զինւորական մասերի աշակցութիւնը:

Ել այն ժողովթական մասսաները, ներկայ ուշաբռում զիւղագիութիւնը, որոնք նաև ամեն ազգի և գոյնի ուկացիկոնների յետեից և այսպիսով իւլի ուշակցիայից նրանք յենարանը և դարձնել այն յառաջադիմութեան սոցիալիստական վերաշինութեան հիմքը: Բազուի խորհուրդը պէտք է ձուտ կադրակերպել զաւաներում զիւղական խորհուրդներ զիւղագիութեան ամենաշքառող խուերից, համախմբել զիւղացիութիւնը առանց ազգի խորութեան, այդ խորհուրդների շուրջը՝ դնել նրանց կուի Ճանապարհի վայր ընդունել իրենց շահագործող սեղերի և իշխանների և այսպիսով պատաստել այն պայմանները, որոնք էր կասենեն ապագայում ընդհարութեանը Խորհրդային Եվրանութեան հետ: Այս տեսակետից յատկապէս թիւրք գիտական զէմուկատարայի վայր մէծ պարագանութիւնը կայ ծանրացած: Ըստին պատմական հանդամանքների գիւղական գասաւորման թիւրքը գիտացիութիւնը չաւնի ամենավելոյն զիւղացիութիւնը անզամ իր ուրուն զամանակացայի և կամացաւածի շահերի և նրա կամակատածի և հանդիսանում բեղական ուշակցիայի, որ ձուում է Կովկասը Տաճկատանի երկամաս գարձնելով հաստատել այսուհեղ միջնադպում է Կովկասը Տաճկատանի շահագործումն ուժեղացնել: Ուրիշ է թուրքը գիւղարեան կառգեր և զիւղացիների շահագործումն ուժեղացնել: Ուրիշ է թուրքը գիւղացիութիւնը՝ այդ առարինի բայց գետ և խաւաթ ժողովուրդը հասկանայ, որ իր գրեկութիւնը խորհուրդների իշխանութեան ուժեղացնեման մէջի և այն օրը, եթ նա իր հօն զանգւածներով կը մըսնէ այդ ճշմարտութիւնը, եթօս կը զարմնէ ընդունից ու աղալարներից, այդ օրը Կովկասիան՝ ժողովուրդների համար կը ծագէ նոր կանքը առշալումը և Կովկասի խավագ զարդ ացման ապահովական գարելի և համարել:

Ա. Զապարիձէն եղել է փետրւարեան օրերին Բագւայ լեզուիոխական կօմիտէի ամենաեռանդուն և ակտիւ անդամներից մէկը: Որպէս Բահուորական և Զինուորական պատգամաւորների խորհրդի նախագահ Զապարիձէն կանգնած է եղել միշտ ամենաառաջին դիրքերում: Եւ դա բայտնի էր Բագւի պրոլետարիատի բոլոր թշնամիներին:

Քաղաքացիական պատերազմից լետոյ մենշևիկները փերձում էին պրովակատորական որոշ միջոցներով գեղօրդանիզայիս մացնել բանւորական շարքերում: Մենշևիկների լիգերից մէկը, Ալոլոն աշխատում էր ամեն կերպ ապացուցել, որ Բագւայ քաղաքացիական պատերազմը եղել է լոկ ազգային մի պատերազմ: Այն հանգամանքը, որ Կովկասեան լեզափոխութեան դիմին կանգնած էր Ս. Շահումեանը շահագործում էր պրոլետարիատի բոլոր հակառակորդների կողմից: Եւ ահա բոլոր այդ պարագաներում մենշևիկների դէմ է ելել Ս. Զապարիձէն ու միշտ ամենաորոշ տոնով շեշտել է, որ նա Ֆիանգաման ճիշտ և ուղիղ է համարում պրոլետարականնեմծամանական դիմք, որ նա դատապարտեի և դաւանանական է համարում մենշևիկների գործելակերպը:

Թիֆլիսում նստած մենշևիկները բնդիակառակ, խորապէս հաւատացած էին, որ «մեղմ» և «վրացի» Զապարիձէն չի կարող երբէք «արդարացնել» Բագւայ մեծամասնականներին: Այնքան խոր էր այդ հաւատը մենշևիկական շրջաններում, որ նրանցից մի քանիսը փորձում էին նորմիսի սրաժանել և «առանձնացնել» Զապարիձէնին Ստ. Շահումեանից: Սակայն ամեն անդամ Զապարիձէն սառը չուր է թափել այդ բոլոր պրօվօկատորների վրայ:

Հետաքրքրական է այդ կողմից մի բնորոշ միջադէպ, որ տեղի է ունեցել յունիսի վերջերին: Յունիսի 20—25-ին Թիֆլիսից Զապարիձէի վրայ հեռագիր է ուղղւել Այդ հեռագրով Խամիշվիլին առաջարկել է Զապարիձէնին «աղատել» վրացիներին և հոգալ Բագւայ պատագ վրացիների մասին:

Այդ հեռագրի մէջ Թիֆլիսի մենշևիկները կանգնելով Զապարիձէի վրացական ծագումի վրայ շեշտել են, որ նրանք բարեացակամ են տրամադրւած տոանձնապէս Զապարիձէի նենակատմամբ: Եւ ահա Զապարիձէն այդ պրօվօկատորական հեռագրին ուղղել է հետեւեալ պատասխանը՝

«Վ. Բաստանի Հանրապետութեան խորհրդի նախագահին՝ Զինէ իձէին:

Եթե տեղեկութիւնները վրացիների ածանր դրութեան» մասին այնքան են ստոյդ, որքան ուրիշ տեղեկութիւնները Բագւի ու Խորհրդալին Հանրապետութեան մասին, որոնցով ամեն օր վրաց դէմոկրատիալին թիւրիմացութեան մէջ էր զցում:

Իմացած եղեք, որ վրացիները ինչպէս Բագւի խորհրդի, այնպէս էլ ամբողջ Խուստական Խորհրդալին Հանրապետութեան տերիտորիայի վրայ ազատ և բոլոր իրաւունքներով օգտագործացիներ են, և ոչ թէ վրացական դէմոկրատիկ հանրապետութեան պէս, որ հէնց ձեր և ձեզ պէսների կողմից դրւած է զերմանօտանակական իմպերիալիստների ձեռքը:

Ցիշեցնում ենք ձեզ, խոկապէս այն վրացիների ծանր կացութեան մասին, որոնք ձեր խոկ կարգադրութեամբ տառապում են բանտերում միայն նրա համար, որ համաձայն չեն ձեր քաղաքականութեան հետ:

Ես և ուրիշ վրացիներ, որ բանւոր դասակարգին չենք դաւանանել, մեծ ատելութեամբ երես ենք թեքում ձեր ինքնակոչ խնամքից:

Բագւի Խորհրդի նախագահ՝ Զապարիձէ:

Պատմական այդ գոկումենտը տպւել է Կովկասեան զբեթէ բոլոր թերթերում: Զապարիձէի պատասխանը եղել է գորաւոր մի ապտակ՝ ուղղւած բոլոր մենշևիկների դէմ:

* * *

Բագւայ Խորհրդալին նոր կառավարութեան մէջ Զապարիձէն եղել է ակտիւ անդամներից մէկը: Շահումեանը և Զապարիձէն եղել է ակտիւ անդամներից մէկը: Նախումեանը և Զա-

պարիձեն փառտօքէն եղել են խորհրդի հիմնական սիւները

Զապարիձէն սկզբում ընտրել է, որպէս ներքին գործերի ժողովրդական կոմիսար, իսկ յետազայտմ՝ օգոստոսին նա իր վրայ է վերցրել նաև պարենաւորման կազմակերպումը:

Որպէս ներքին գործերի կոմիսար Զապարիձէն կատարել է ամենամեծ աշխատանք: Նա իր վրայ է վերցրել նախև առաջ, տեղական խորհուրդների կազմակերպման գործը: Բագւայ մեծամասնական կազմակերպութեան անդամ Ազգբանկովի հետ միասին նա շրջել է բոլոր գիւղերում, Բագւայ գաւառի և Շամախու շրջանի տւաններում և արյանդ կազմակերպել է գիւղացիական խորհուրդներ: Կարելի է առանց վարանումների պնդել, որ այդ ուղղութեամբ Զապարիձէն կատարել է աւելի մեծ աշխատանք, քան Բագւայ Ֆնացեալ գործիչները: Ոչ մի խոչնդու և ոչ մի հանգամանք նրան չի լուսահատեցրել: Նա մտել է նոյնիսկ այն ռայտնները և շըշաններ՝ ուր միշտ ուժեղ է եղել նացիօնալիքմի ազդեցութիւնը: Անմիատ և անյուսահատ սրտով նա հետեւղական պալքար է մզել հակայեղափակութեան դէմ:

Եւ շնորհիւ գրան Բագւայ ռայօնի և գաւառի թուրք
զիւղայիրութեան շրջաններում Զապարիձէն եզել է ամենա-
հեղինակաւոր մարզը։ Դրանսկ պիտի բացատրել այն, որ ոչ
ոք մեծամասնականների հակառակորդներից չէր համարձակ-
ւում դուրս գալ Զապարիձէի գէմ, ոչ ոք չէր վստահանում
քննադատել Զապարիձէին։

Կարծ ժամանակւայ ընթացքում, աննպաստ պայմաններում՝ Զապարիձէին լաշողւել է այնուամենայնիւ կազմակերպել թուրք գիւղացիական խորհուրդներ ոչ միայն Բագւայ ռայօնում, այլ նաև Շամախու և Լէնջօրանի շրջաններում։ Եւ այդպիսով ներքին գործերի կոմիսարիատը դառել է իրապէս գիւղացիական մասսաների հետ ամենասերտ կերպով կապւած ժողովրդական մի հիմնարկութիւն*):

*²) Թթվաք պիտացիական շաբաթներ կրոյ ու կանգնել եմ «Կազի Մամիկոն Առաքարական» պաշտոնը:

Թուրք գիւղացիները գիտէին, որ նոր կոմիտարիառ
կարականապէս տարբեր ուժ է հին, միապետական պօլիցիութիզ
և ժամանակաւոր կառավարութեան կողմից հաստատւած ադ-
մինիստրացիալից: Այդ պատճառով նրանք իրենք են պաշտ-
պանուած Զագարիձեի բոլոր որոշումներն և կարգադրութիւն-
ները:

Ինչպէս բացատրել Զապարիձէի այդ արագութօք հեղինակութիւնը։ Այդ հարցին պատասխանելու հօժմար պէտք է նկատի առնել մի շարք հանգամանքներ։

Զապարիձէն, զիստական չեր: Նա հրապարակախօս չեր:
Նա դրեթէ չի զբաղւել զրական աշխատամներով: Չնայած զրան
նա Բագւայ ամյոնում եղել է նոյն քան հեղինակաւոր, որը քան
և Շահումեանը: Խսէ Բագւայ զիւղացիական շրջաններում նրա
անունը եղել է միտի սիրելի անունը:

Անշուշտ մհեմագոյն չափավ Զապարիձէի հեղինակութիւնը
կապւած է նրա անցեալի հետ:

Մեր զրբոյկի սկզբում մենք արդէն շեշտեցինք, որ Բագ-
ւաշ նաև թարդիւնաբերական ռալունում Զապարիձէն, եղել է
ամենամեծ պրօֆեսուսիոնալ միութեան կազմակերպողը: Այնեղով
այդ միութեան քարտուզար Զապարիձէն գործ է ու նեցել
նաև թարդիւնաբերական պրոլետարիատի ամենալայն արքերի
հետ նրան գիտեին և ճանաչում էին բոլորը՝ հայ, թուրք,
լիդիի, ռուս և վրացի բանուօրները: Նրան հանաչում էին, ե
շրջակայ գիւղերում, որովհետեւ բոլորին յախոնի էր, որ Զա-
պարիձէն Բագւայ այ պրոլետարիատի լեզուփոխական պարագուխն
է: Միւս կողմից բոլորին յախոնի էր նուև ա'յն, որ իր գա-
ղափարների համար օքնեկեր Ալիօշան» կորւել է ընտանիքից
և բոլոր ծառիկներից ու երկար տարիների ընթացքում հե-
ռու աքսորավայրերում ժամնը և տաժանակիր օրեր է ապրել
Զապարիձէն «եկու որ» և «պրօֆեսուսիոնալ» լեզուփոխական

չեր: Նա յեղափոխական և դեմոկրատ էր իր տեմպերամենտով: Նրա բանաւոր խօսքը այդ պատճառով ահազին տղղեցութիւն էր թողնում: Նրա «հուետորութիւնը» բնածին մի ոյժ էր—որը Զապարիձէի շուրջն է խմբում բոլոր պրոլետարներին, բոլոր խիղախ, անկաշառ և երիտասարդ մարտիկներին...

ՅԱԻԵԼԻԱԾ

Ալստեղ բնորում ենք առանց փոփոխութիւնների այն դոկումենտը, որի խմբագրութեան մէջ մասնակցել է Ալեօշա Զապարիձէն Ս. Շահումեանի հետ միասին:

**ԲԱԳԻԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՄԽՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ՅԱՅՑԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ**

Բագւի Բ. Զ. և Ն. պատգամաւորների Խորհուրդը իր ապրիլ ամսի 25-ին ունեցած նիստում, տեղական իշխանութիւն կազմեց—Բագւի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ: Տեղական այսպիսի իշխանութեան ստեղծումը, ամենենին չի նշանակում բաժանել համառուսական Խորհրդային հանրապետութիւնից, ինչպէս դա կարող է թւարագալին հանրապետութիւնից, ինչպէս դա կարող է թւարագալին մարդկանց, որոնք ապրել են նորտատիրական միահման-կենտրոնացման հառարակարգով և կամ տմենալու դեպքում կրթւած են եղել բուրժուական պարլամենտարիզմի իրաւական հասկացողութիւններով:

Բագւի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, պէտք է սերտ կապերով շաղկապւած լինի համառուսական կենտրոնական իշխանութեան հետ, և տեղական պալմանների հետ յարմարւելով, նա պէտք է կեանքի մէջ մայնէ Ռուսաստանի Բանուորա-Դիւղացիական կառավարութեան — Ժողովրդական Կոմիսարների Բարձրագործ Խորհուրդի բոլոր գեկրեանները և կարգադրութիւնները: Խորհուրդների հանրապետութեան մէջ, բանուորական և գիւղացիական կօմմունանների հանրապետութեան մէջ, որի հիմքը դրւեց հոկտեմբերեան յեղափոխութեամբ, Բագւի Խորհուրդը շարունակում է թալ միա-

նականի, մեծի և ամբողջի անքակտելի մասը: Բագւի ժողովրդական կոմիսսարների Խորհուրդի հիմնական խնդիրներից մեկը լինելու է, հնարաւորին չափ ամուր և սերտ կապ սաեղթելու կենարոնական իշխանութեան հետ և հնարաւորին չափ սերտ միութիւն ստեղծելու Բագւի բանուորների և նահանդի չքաւոր գիւղացիութեան, ու համայն Ռուսաստանի բանուորների և գիւղացիների միջև:

Բագւի ժողովրդական կոմիսսարների Խորհուրդը չի հանդիսանում բուրժուական խօսքի իմաստով տեղական գործադիր իշխանութիւն, — Բագւի պրուետարիատի բարձրագոյն օրգանի վերաբերմամբ, — Պատղաճաւորների Խորհուրդին: Նա իրեն չի իւրացնում ամբողջ գործադիր-կատարողական իշխանութիւնը: Բագւի Բանուորական, Զինւորական և Նաւաստիների Պատգամաւորների Խորհուրդը և նրա Գործադիր Կոմիտէն շարունակում են լինել ինչպէս մինչև այժմս, միաժամանակ օրէնսդրական և գործադիր — կատարողական իշխանութիւն: Համաձայն նոր Խորհուրդացին Սոցիալիստական Հանրապետութեան սկզբունքներին, օրէնսդրում և կատավարում են հենց իրենք բանուորները, Խորհուրդում իրենց պատգամաւորների միջոցաւ: Բագւի ժողովրդական կոմիսսարների Խորհուրդը, հանդիսանում է, որպէս տեխնիքական օրգան, թեթևացնելով օրէնսդրութեան և կառավարութեան եղանակի այս խնդիրը: Նա պէտք է կեանքի մէջ մացնի: Խորհուրդի որոշութերը, նա պէտք է օրէնսդրի, գեկրեաներ հրատարակի և այլն: բայց ամեն ըսպէ պէտք է պատասխանի իր իւրաքանչիւր քայլի համար Բան. Զին. և Նաւ. Պատգամաւորների Խորհուրդի առջև:

Բագւի Խորհուրդը մարտ ամսին տարած լազմաւթիւնից լետոյ, Բագու քաղաքում և նրա շրջակալքում լիազօր տէր դարձաւ: Նա միաժամանակ հանդիսանում է, միակ կառավարչական օրգանը, որի վրայ պարտականութիւն է ընկնում հնդ տանել ամբողջ նահանգի մասին, նրա միլիոննաւոր զիւ-

ղական ազգաբնակչութեամբ: Միւս կողմից, Բագւի Խորհուրդը կանչւած է պալքարելու և արգէն փաստօրէն կռւում է և պատերազմում ամբողջ Անդրկովկասում և Դաղստանի շրջանում Խորհրդացին իշխանութիւն հաստատելու համար:

Նրա համար, որպէսզի Բագւի Խորհուրդը կարողանալի կատար ածել այն բազմաթիւ պարտականութիւնները և հոկտյական խնդիրները, որոնք ընկած են նրա վրայ, նա պէտք է սաեղթէր շարժուն ապարատ մի շարք բաժիններով և պատասխանատու առաջորդներով: Եւ ալղափի մի ապարատ է հանդիսանում Բագւի ժողովրդական կոմիսսարների Խորհուրդը, պատասխանատու գործիչների կողեւ զիւլով:

Բագւի Բան. Զին. և Նաւ. Պատգամաւորական Խորհուրդը, իր համար պարագագիր նանաչելով Խորհուրդների Համառուսական Համագումարի որոշութերը, գործելով միանգամայն համաձայն Կենտրոնական Գործադիր Կոմիտէի և Ժողովրդական կոմիսսարների Բարձրագոյն Խորհուրդի հետ, արգէն նկատի ունի մի շարք սոցիալական ձեռնարկութիւններ, որոնք պէտք է կեանքի մէջ մացրւին:

Խորհուրդների իշխանութիւնը միայն այն ժամանակ կարող է ննկեց պրոլետարական իշխանութիւն լինել, երբ նա միշոցների կողքին կը սահմանսփակի բուրժուազիսմի տնօւսական տիրապետութիւնը, կաւացնի բանուոր գասի և բազարի չքաւոր գասի զրութիւնը: Խորհուրդի արգէն նկատի տուած միշոցները ընդհանուր զմերով — Նաւ-թալին արդիւնագործութեան, բանկերի, քաղաքի տնտեսութեան, ծովալին տրանսպորտի, երկաթուղիների մասին և այլն, ծօտիկ ապագայում պէտք է կոնկրէտ լուծում սահման և կեանքում գործազրւենու Բագւի նահանգի հողերը մինչեւ օրս գտնուած են խաների և բեղերի ձեռքում: Անհրաժեշտ են կարու կ քայլեր, կալւածատիրական հողերը գիւղացիներին լանձնելու համար: Նահանգում անհրաժեշտ է Գիւղացիական Խորհուրդը:

ներ ստեղծել և միացնել Գաւառալին ու Նահանգային Խոր-
հուրդները։ Հարկաւոր է Կերոսական շանքեր թափել բաղաքի
և նահանգի պարենաւորման կարիքը թեթևացնելու համար։
Պայքարել անհրաժեշտ շահագործման դէմ, որը կամաց-կամաց
առարինանտրար պէտք է տանի մասնաւոր տուետուրի ոչնչաց-
ման։ Միջոցներ հարկաւոր են անգործութեան դէմ մաքառե-
լու, անհրաժեշտ հասարակական աշխատանքներ ստեղծելու
հանապարհով։ Հարկաւոր են միջոցներ ձեւք առնել նմա-
նապէս ժաղովրդական լրսաւորութեան շրջանում—ամենից
առաջ ստեղծելու համար աշխատաւորական, պրոլետարական,
միջզգակին դպրոց, պարտադիր և ձրի ուսումով, և նոյնպէս
դպրոցից դուրս, մտսաների լրսաւորութեան գործը կա-
նոնաւորելու համար։ Միջոցներ են հարկաւոր բանւորների
և բաղաքի չքաւոր դասի բնակարտնային կարիքը բարելաւե-
լու համար, ունեորների մեծ և խճախ բոլորովին դատարկ
բնակարտնները տեղափոխելու հանապարհով, միջոցներ, որոնք
հետզհետէ տանելու են դէպի տների ազդայնացման։

Բազւի Խորհուրդը հնարաւորութիւն սահցաւ վերեւում
թւած բոլոր հարցերը կենքում գործադրելու միայն, բան-
ւոր դասի թշնամիների դէմ զինւած կուելու հետեանքով։
Քաղաքացիական կուիր ներկայումս էլ շարունակում է։
Կարմիր Գւարդիալից և Կարմիր Բանակից հզող մեր ընկերնե-
րի, առաջաւոր գնդերը կռւում են Պետրովսկում, Շամախում,
Հիմում են Խորհրդային իշխանութիւն Լենքորանում, Դեր-
բինում, Ղուբալում, Սալեանում և ուրիշ տեղերում։ Խոր-
հրդակին Իշխանութեան վերջնական յաղթանակի համար, այս
իշխանութեան ամրող Անդրկովկասում տարածելու համար, և
նոյնպէս վերը լիշած միջոցները կեանքում իրականացնելու
համար, անհրաժեշտ է յաղթական կերպով շարունակել սկսւած
քաղաքացիական կուիր, իսկ զրա համար, ամենից առաջ
հարկաւոր է ունենալ ուժեղ Կարմիր Բանակ։ Այս զօրքը
ստեղծելու աշխատանքները արդէն սկսւած են, հարկաւոր

է, որ պէսզի նա շարունակւի ամբողջ թափով լետագալում ես։
Ոհա՛, մեր գէմ կանգնած հարցերը որքան մեծ են և լայ-
նաժաւալ։ Այս լայն ծրագրների իրականացնելը չի կարող լի-
նել բացառապէս Բազւի Ժողովրդական։ Կոմիսարների Խոր-
հուրդի գործը Միայն Բազւի պրոլետարիատի ակտիւ և
կազմակերպւած օգնութիւնը կարող է հնարաւոր դարձնել
կեանքի մէջ մտցնելու անհրաժեշտ միջոցները։ Մասսաների
ստեղծադորժական աշխատանքը, որը կանչւած է իշխանութեան
և ինքնավարութեան գլուխը, խորհուրդային բաղաքակա-
նութեան յաղթանակի յաջողութեան և միակ դրաւականն
է հանգիսանում։ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը,
կարող է և պէտք է այս աշխատանքի մէջ ինիցիատորը ինքը^{լինի}, բայց առանց բանւորների օժանդակութեան, նա ոչինչ
անել չէ կարող։ Անչ ոք մեղ ազատութիւն չի տայ՝ ոչ Աս-
տածած, ոչ թագաւորն և ոչ Աերոսը», պրոլետարական հիմ-
նի այս խօսքերը պէտք է ընկեր բանւորները շարունակ լիշեն։

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդից, ամեն մէ-
կեցս պահանջեցէք եռանգուն և անդադար աշխատանք,
ըննադատեցէք մեր իւրաքանչիւր բայլը, դատապարտեցէք,
հեռացրէք, փոխէք նրանց, ովքեր իրենց բարձր պաշտօնին
արժանի և պէտքական չեն լինի, բայց իշխանութեան ամ-
բողջ պատասխանատութիւնը մեր վրայ մի՛ ձգէք։ Զվեր-
բերելիք մեղ այնպէս, ինչպէս դուք վերաբերեւում էիք և
պէտք է վերաբերելիք բուրժուական իշխանութիւններին։
Ժողովրդական Կոմիսարների իշխանութիւնը նոյնպէս,
ինչպէս և Գործադիր Կոմիտէի և Պատգամաւորների Խոր-
հուրդի իշխանութիւնը—ձեր սեփական և ընտրովի իշխանու-
թիւնն է։ Այս իշխանութեան թերութիւնները ձեր սե-
փական պահանութիւններն են։ Մոռացէք ձեր անձնական,
խմբական, Փիրմական և ուրիշ շահերը, ձեր բոլոր շանքերը
միացրէք յանուն ընդհանուր գործի, ընդհանուր բանւո-
րական իշխանութեան շուրջը։

Խուսաստանի բանեոր գասակարդը, Կոկտեմբերեան յեզա-
փախութիւնից յետոյ, ինքն առաջինը կանգնեց իր սեփական
պրոլետարական իշխանութեան ստեղծագործման ուղղիի
վրայ. բանեորների լայն մասսաները և նրանց ընտրած ներ-
կայացուցիչները նոր են սիսում առիորել պետութիւն կա-
ռավարելու գմւար ու բարդ գործք և երկրի տնտեսական
կեանքի հազմք: Մխալներ և անյաշողութիւններ շատ բնական
են ու անխուսափելի: Միայն հարկաւոր է ընդհանուր պա-
տասխանատւութեան գիտակցութիւն և Խորհուրդի շուրջ
համերաշխ ընդհանուր աշխատանք, յանուն աշխատանքի
աղաւառութեան այն մեծ իդէալների, որը յայտարարել է հոկ-
տեմբերեան բանեորադիւղացիական յեղափոխութիւնը:

Յու սալով բանեորական մասսաների լայն պաշտպանու-
թեան և նրանց կենցանի, ստեղծագործող ինքնազորժու-
նեաւթեան վրայ, Ժողովրդական Կոմիսարների Բագւի Խոր-
հուրդը իր գործին է անցնում:

Բագւի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի նախա-
գահ և արտաքին գործերի կոմիսար՝ Ս. Շահումեան:

Ներքին գործերի կոմիսար՝ Պ. Զափարիձե:

Զինուրա-ծովային գործերի կոմիսար՝ Կորգանով:

Արդարադատութեան կոմիսար՝ Ա. Կաբինեան
(Գարրիէլեան):

Ժողովրդական անտեսութեան գործերի կոմիսար
Վ. Ֆիոլետով:

Հուսաւորութեան կոմիսար՝ Կոլեսնիկով:

Քաղաքային տնտեսութեան կոմիսար՝ Նարիմանով:

Ֆինանսների կոմիսար՝ Կիրեև:



Հայաստանի Պահպանի կողման կուսակ հրատարակությամբ լոյս ան տնօս

- 1) Գուշառատանի Կոմմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների) ծրագիր—զինը¹ 2 ր. 50 կ.
- 2) III Խոտեկարինալի Պատաֆօրման—զինը¹ 1 ր.
- 3) Ն. Լենին. «Թէիսնեց բուժութական և պրոլետարական դիմոկրատիայի յասին»—զինը¹ 50 կոպ.
- 4) «Հաւաստանի Կոմմունիստական Կուսակցութեան ներկայացուցիչք զեկուցումը III Կոմմունիստական Խոտեկարինալին»—զինը¹ 60 կոպ.
- 5) «Կոմմունիստական Խոտեկարինալի Մանիդեստը ամրագջ աշխածի պրոլետարիատին»—զինը¹ 1 ր.
- 6) Ն. Լենին. «Երրորդ Խոտեկարինալի տեղը պատմութեան մէջ»—զինը¹ 1 ր.
- 7) Ն. Լենին. «Ի՞նչ պէտք է լինի մեր կուսակցութեան անունը»—զինը¹ 50 կ.
- 8) ՊԱՆԵԿՈՒՆ. «Թալանի Բաժանումը»—զինը¹ 1 ր.
- 9) ԿԱՐԻՆԵԼԻՆ. «Էմպէրիալիզմ և Արմէնիա»—զինը¹ 3 ր.
- 10) Աւազիթ Բատոյն—զինը¹ 50 կ.
- 11) Ն. Լենին. «Քաղաքական Կուսակցութիւնները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբնանը»—
- 12) ՎԱԼԵՔԼՄ Լիբունին. «Սարդին ու Ճանձներ»—զինը¹ 75 կ.
- 13) Ն. ԱՆՏՈՆՈՎ. «Ամորով I, Լիւզովիկ XVI, Կիւրուալ II»—զինը¹ 1 ր.

1 ր. 50 կ.

- 18) Ա. ԿԱՐԻՆԵԼԻՆ. «Կոլլաօի պօլետարիատի պատմութիւնից—Կազի Մամեդ և Աղջորէկով»—զինը¹ 2 ր.
 - 19) «Կաթմիթ Ըստոց (Երկուագ հրատարակութիւն)»—զինը¹ 50 կ.
- Հայկական Գործերի Կոմիսարիատի հրանժարականից մեռավոր լոյս նն տեսակ
- 1) Ա. Սոց. Փեղ. Խորհուրդների անդամութեան Սահմանադրութիւնը:
 - 2) Ն. Լենին. «Նամակ Ամերիկան բանվագիներին»—զինը¹ 1 թուր.
 - 3) Ա. ՓԲԴԶ. «Պրոլետարական պուղիան»—զինը¹ 2 ր.
 - 4) ԶԻՉԵՐԻՆ. «Ի՞նքնուից յետոյոց (Զեկուցում Խորհրդագների 5-րդ Համագումարին)»—զինը¹ 1 ր.
 - 5) ՆԵՐՀԱԿ. «Դէպօրեր Բագրում, Հ. Յ. Պաշնակցութիւնը և Բազի Խորհրդային Իշխանութիւնը»—զինը¹ 57 կ.
 - 6) Ն. Լենին. «Կարլ Մարքս (Համառօտ կենսագրութիւնը և Ժաթբանիցի շարադրութիւնը)»—զինը¹ 1 ր. 50 կ.
 - 7) ՆԵՐՀԱԿ. «Մուսական Ցեղափառութիւնը և պրոլետարիատի տակտիկան»—զինը¹ 1 ր.
 - 9) Մ. ՊԱՆԵԿՈՒՆ (Ալլուման) «Ասիան և իր զեթը համաշխարհային պատճեն մէջ»—զինը¹ 3 ր.

- II. «Կար Լիբենենու» (Լիբենենի նկարով)—զինը¹ 1 ր.
- 11) «Խորհրդային Կառավարութեան նույն Վիլսոնին»—զինը¹ 75 կ.
 - 12) «Միանալու աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—զինը¹ 2 ր.
 - 13) Հ. ՅՈՒ. ՓԵՆ. «Դէպի քաղաքական կուլ»—զինը¹ 75 կ.

- 15) Ա. ՄԱՐՏԻ և Փ. ԷՆԴԻՆ. «Կոմմունիստական Մանիդեստ»—Պէիսանօվի Առուցու և հեղինակների առաջբաններով—զինը¹ 3 ր.
- 16) Պ. ԼԱՖԱՐ. «Շնունական Եւոլիցիան և Կոմմունիզմ»—զինը¹ 50 կ.
- 17) ԿԱՐԻՆԵԼԻՆ. «Ի՞նչ բան է Խորհրդային Խօսնութեանութիւնը և ինչպես է կազմում»—զինը¹ 2 ր.
- 18) «Քրանոնիական Մեծ Ցեղափառութիւնը»—զինը¹ 3 ր.
- 20) Կ. ԵՐԵՄԵՆԻ. «Արցիալիստական Խորհրդ. Համբարձութիւն»—զինը¹ 1 ր.
- 21) ԿԱՐԻՆԵԼԻՆ. «Ուրիշ հետ էր զուր. զինը»—զինը¹ 50 կ.
- 22) Ա. Ա. ԱՆԿԱՆԵԼԻՆ. «Համաստականներին» (Ճշի):
- 23) Ա. ՏԵՐԵՆԻՆ. «Ի՞նչ է տուժ Լենինը զիւցացիներին»—զինը¹ 1 ր. 25 կ.
- 24) ԲԱՄԵՐԵՆԱՍՊԻ. «Էմպէրիալիզմ»—զինը¹ 2 ր.



